

**ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՒՆԱՏԵՂՈՒՄՆԵՐ. ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ
ՍԻՐԱՅԻՆ ՊՈՆԶԻԱԿ***

Բանալի բառեր. - պոեզիա, սիրային, տրամաբանություն, տրամադրություն, դիտանկյուն, ճանաչողություն, աշխարհընկալում, փիլիսոփայական:

Վերջին 50-60 տարիներին, հետսևակյան սերնդի բանաստեղծներն ամեն ինչ անում էին նորոգելու հայ բանաստեղծությունը: Մի քանիսին դա հաջողվեց, և այսօր ունենք որոշակիորեն բազմաձայն պոեզիա: Սակայն այդ նորոգման արդյունքում էր, թե մեկ ուրիշ պատճառով, մի շարք բանաստեղծներ սիրային բանաստեղծություններ գրեթե չգրեցին: Պարզ էր, ավանդական քնարերգության ձևերին փոխարինելու էին գալիս նոր մոտեցումներ և, կարծում եմ, հենց նորի այս փնտրտուքն էլ առթեց, որ սիրային քնարերգությունը կամ բանաստեղծությունը մղվեց հետին պլան:

Էդվարդ Միլիտոնյանն այն քչերից է, որ առաջին՝ «Երեք խնձոր» (1977 թ.) գրքից սկսած ընթերցողին ներկայացրեց սիրո առանցքի շուրջ կառուցված բանաստեղծություններ, անգամ բանաստեղծական շարքեր: 2019 թվականին բանաստեղծի սիրային պոեզիան լույս տեսավ առանձին գրքով՝ «Քո աչքերից թունավորված» վերնագրով: Սույն ժողովածուում ներառված բանաստեղծությունները չորս տասնամյակից ավելի ժամանակագրական շարակարգ ունեն, իսկ եթե նկատի ունենանք նաև մամուլային հրապարակումները, ապա այն կանցնի հինգ տասնամյակը:

«Քո աչքերից թունավորված» գրքում որոշակիորեն պահպանվել է ժամանակագրական կարգը և բանաստեղծությունները ներկայացված են ըստ ժողովածուների. առաջին՝ «Երեք խնձոր» գրքից մինչև նոր բանաստեղծություններ: Սա հնարավորություն է ընձեռում ճանաչել գրողի դիտանկյունի փոփոխությունները տարբեր ժամանակներում: Եթե 1970-ական թվականներին բանաստեղծն ունի ավելի զգացմունքային բանաձևումներ՝

* Հոդվածն ընդունված է տպագրության 18.10.2019 թ.:

*Մենք փակ աչքերով իրար սիրեցինք
Ու շփոթված լույս կար մեր ձեռքերում
Եվ ապրում էինք ծովի ջրերի,
Ծաղիկների մեջ ու հասկերում,*

ապա վերջին շրջանի բանաստեղծություններում սերը դառնում է համեմատական ու հարաբերական, բանաստեղծը մասնակցից վերածվում է հայեցողի, և ծնվում են մի շարք փիլիսոփայական հարցադրումներ

*Ինչո՞ւ է տվել գմբեթի ձև
Աղջկա կրծքերին:*

*Ինչո՞ւ է տվել շրջված գավաթի ձև
Աղջկա կրծքերին:*

Այսինքն՝ բանաստեղծի ճանաչողությունը ժամանակի ընթացքում ավելի է խորացել, գույները թանձրացել են, միտքն ու զգացումները՝ խտացել:

Մյուս առանձնահատկությունը անմիջականորեն կապված է եղվարդ Միլիտոնյանի հետմոդեռն մտածողության հետ: Չտարյուն սիրերգություն համարել այս գիրքը՝ ճիշտ չի լինի, բայց մյուս կողմից՝ չկա մի բանաստեղծություն, որը սիրո մասին չլինի, բայց ոչ միայն սիրո: Ուստի ավելի բնութագրական կլինի, եթե նշենք, որ «Քո աչքերից թունավորված» ժողովածուն գիրք է աշխարհի ու մարդու մասին՝ հավաքված սիրո առանցքի շուրջ: Այսպիսի սիրային բանաստեղծությունն իր մեջ կյանքի մի շարք տարակերպ երևույթներ է ներառում: Ահա մի շարք բանաստեղծություններ մարդ-բնություն կապի մասին (հատկապես «Ծովի երգ-երգոց» շարքը), ահա մի շարք բանաստեղծություններ, որոնք ցուցանում են քաղաքային կյանքը («Տոբ: Այստեղ ամոթ է», «Վթարային լույսերը վառած», «Ես՝ սեզ վայրի», «Մեր ժամանակի աղջիկները», «Խաչմերուկ» և այլն): Սակայն այս բանաստեղծությունները մեկ ընդհանրություն ունեն. բանաստեղծության հիմնական շարժիչ ուժը կինն է, և նրա գեղեցկությամբ հմայված բանաստեղծը մի նոր «երգ-երգոց» է ստեղծում՝ փառաբանելով մարմնային ու հոգևոր գեղեցկությունները.

*Քո փոքրիկ կրծքերը լորերի նման
Վախով արթնացան ասիերիս մեջ,
Սրսփացին, հետո նվաղեցին*

Ու հասկացան, որ ափերն իմ

Իրենց ամենալավ բներն են:

Բանաստեղծության առաջնային պլանում կինն է, գեղեցկուհին, իսկ այրամարդու կերպարը՝ քողարկված, իր կրքով, ուժով, տիրելու, նվաճելու, վայելելու անհագ ցանկությամբ: Սա նոր տեսակի սիրային բանաստեղծություն է, ուր չկա նվնվանություն, չկա թախծապարուր վակուում, չկա տխրություն, այլ կա սիրո վայելքն իբրև նախնական ծես, ու իբրև մերօրյա տոնախմբություն:

Ո՞վ է կնոջ մարմնի ձև տվել

Այս թառանչին,

Կանգնել չորեքթաթ՝

Նրան է նայում բնագորդ արու,

Եվ խիստ քաղաքակիրթ

Բառեր է շշնջում,

Կոծկելով շողարձակ

Ինքնագոհումը վայրի:

«Սերը» կրճկրճում է բերանի մեջ

Սառցե խնձորի պես:

Եղվարդ Միլիտոնյանի բանաստեղծությունը կանգնած է բազմազան գեղարվեստական երևույթների համատեղման հանգույցում և լայն տեսական ու գրական ընդհանրացումների, ընկալումների, հոգևոր և բարոյական գեղագիտական հիմքերի բացահայտումների հնարավորություններ է ընձեռում:

Առաջին աչքի զարնող հատկանիշներից է Եպիկականի և քնարականության համատեղումն ու ժամանակակից հայ իրականության համատեքստում այն ներկայացնելը: Երկու գեղարվեստական աշխարհներ են կերտվում պատմական և գրական-գեղարվեստական:

Այն մեղքի խնձորը,

Որ գայթակղեց

Եվային,

Փտել է Գրիգոր Չամզայի

Մեքքի մեջ:

Հիմա

Կորիզներն է նետել

Մեր ատամի տակ:

Այս երկու աշխարհների տարբերություններն արտահայտվում են հատկապես բառակիրառման մակարդակներում: Բառերը, պարզվում է, ոչ միայն ասելիքի նպատակ ունեն, այլ նաև ստեղծագործողի ներքին մշակութաբանական աշխարհին ուղղված իրենց կոչման առանձնահատկությունների կրողներ են:

Սիրային պոեզիան առասպելաբանական ու ծիսական գոգավորություններ է ստանում, ուր բանաստեղծի «ես»-ը երկրորդվում է և առաջնային են դառնում գոյության կենսապայմանները: Մտածողության էպիկական և քնարական տիպերը հակադիսամիկա են ստեղծում, յուրովի խճճելով ստեղծագործողի ինքնորոշման ուղիները, սակայն բացահայտվում են լրիվությամբ.

Եթե Աստված չստեղծեր կնոջը

Տղամարդու կողից,

Տղամարդը պարզ վիրաբուժական միջոցով

Ձև կտար նրան

Աստծո ցուցամատից:

Այդ կիսն է մշտապես ցույց տալիս տղամարդուն

Սքանչելի տեղերը:

Առանց նրա դժվար է,

Նրա հետ՝ առավել:

Էպիկականի և քնարականի համադրման սկզբնական մակարդակը դառնում է արվեստագետի ստեղծագործական ուղու բնույթը: Ստեղծվում է պատմություն՝ բանաստեղծի կերպարի շուրջ, որը գնալով դառնում է բանաստեղծություն առանց պատմության: Այս պարագայում բնագիրը ստանում է խոր փիլիսոփայական ատաղծ.

Աղջկա հոտից փշաքաղվում է օդը,

Նրա պարից ցած է գլորվում

Սկիհն հազարամյա

Եվ փշրվում, այո, փշրվում:

Թող Աստված չանի՝ տեսնես նրա սլացքը

Լեռան բեմերին, քաղաքում աշնան,

*Երբ մայրամուտի նուռն է ջախջախվում
Մետաղե կմախքին բարձրահարկի:*

Սա «մենակատարի» պոեզիա է՝ նկարելու պես, որտեղ գուևային երանգները կարող են հակադիր լինել, կերպարները՝ բազմաբնույթ, մոտիկից դիտարկելիս՝ դետալային, սակայն հեռավորության վրա կամաց-կամաց սկսվում է բացահայտվել աշխարհը՝ սիրո աշխարհը, որ հաճախ արտառոց թվացող արտաքին երևույթների տակ է թաքնվում, որ փոխաբերական լայն իմաստներ ունի, որ պատմության հետ հարաբերակցությունների բնույթով է առանձնանում: Սա պայմանավորված է որոշակի տրամաբանության և քնարական տրամադրության անընդհատական փոխատեղումներով.

*Հղիացավ կինը ծովից,
Փորը փքված մի առագաստ,
Լողում էր նա ջրերի մեջ,
Աչքն էր շողում ինչպես ավաաստ:*

*Ու երկնեց նա ծովի խորքում,
Ծնեց մի ծով, ծովից կապույտ:
Այդպիսի բան դեռ չէր տեսել
Անգամ երկինքն աստղապտույտ:*

Սիրո ամբողջական գեղարվեստական վերարտադրության գաղափարը, ժամանակի եության, ստեղծագործական մասշտաբի և մոնումենտալության բացահայտման են տանում բանաստեղծի կենդանի աչքի շնորհիվ: Սպառնիչ պատկերված են սերն ու շրջակա աշխարհը, ինչը բնագրում առարկայանում է իբրև ընդհանուրի մեջ մասնավորը, և այդ մասնավորի շնորհիվ ուղղորդում գրողի դիտանկյունը համընդհանուրի մեջ:

Միլիտոնյանի քնարական խոսքի առանձնահատկությունը պատկերի առանձգականության մեջ է՝ ուղղված ծարավների միայնակ բազմությանը, որոնք բանաստեղծի խոսքի խորքում գտնում են միայնակ մարդուն՝ աշխարհին դեմ-հանդիման: Նման գեղագիտական մոտեցման գերիշխող առանձնահատկությունը հեղինակի և ընթերցողի սուբյեկտիվության, գրողի անհատականության հաղթահարման և նրա հասցեատիրոջ հաղթանակն է, և ընթերցողն այս պոետիկ աշխարհի հետ հաղորդակցվելիս ձեռք է բերում ինքն իրեն և միլիտոնյանական սիրո ընկալումը: Նման ձևով ստեղծված գեղագիտության մեջ

ընթերցողի համահեղինակությունը վերածվում է առանցքային բաղադրիչի, ընթերցողը դառնում է լսող, տեսանող, նույնիսկ մասնակից.

*Գրադարանում
Աղջիկն ու տղան
Սիրում են իրար,
Քիչ է մտում պառկեն նստարանին:
Նրանք երևի
Քիչ առաջ
Սիրային գիրք էին կարդացել:
Նրանք են այդ գիրքը,
Որ տրոփում է գրադարանում
Շուշան ծաղկի պես:*

Միլիտոնյանի սիրային բանաստեղծության «սթափեցնող» ազդեցությունը բյուրեղացնում է հիմնականում շրջակա միջավայրի էպիկական բազմազանությունը: Նրա բառի «հետաքրքրաշարժ» ձայնում «ես»-ի գոյությունը համակողմանի է դառնում: Երբ մենք կարդում ենք Միլիտոնյանի սիրային բանաստեղծությունները, ամեն ինչ մոռանում ենք՝ ծուլվում տեքստին:

Էպիկականի և քնարականի ընդդիմությունը «Քո աչքերից թունավորված» գրքում համընկնում է Միլիտոնյանի աշխարհընկալման և գեղագիտական ճաշակի հետ: Արվեստի և իրականության հարաբերությունները միմյանց թարգման են դառնում: Իրականության քնարական ընկալումը դառնում է բանաստեղծի ստեղծած փոխաբերական աշխարհի մի մասը:

Այս ժողովածուն հնարավորություն է տալիս ընկալել բանաստեղծի ստեղծագործական էվոյուցիան, ուր իրար հակադիր են դառնում երկու բանաստեղծներ՝ իրականության հետ ազատ հարաբերակցվող և քնարական աշխարհում մեկուսացածի հոգևոր խճանկարը:

Արմեն Ավանեսյան - Գիտական հետաքրքրությունները հայ և համաշխարհային Նորագույն, ինչպես նաև սփյուռքի և արդի գրականության հիմնախնդիրներն են: Հեղինակ է երկու մենագրության և վեց տասնյակից ավելի հոդվածների: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող է:

АРМЕН АВАНЕСЯН - СДВИГИ ЛОГИКИ И НАСТРОЕНИЯ: ЛЮБОВНАЯ ПОЭЗИЯ ЭДВАРД МИЛИТОНЯНА - Любовные стихи Эдварда Милитоняна обсуждаются в сборниках. Это позволяет распознавать изменения в точке зрения автора в разное время.

В последних стихах образ любви становится сравнительным и относительным, по усмотрению поэт становится участником, и возникает ряд философских вопросов.

Одной из ярких черт любовной поэзии Эдуарда Милитоняна является сочетание эпоса и лирики и его представления в контексте современной армянской реальности. Существует два мира искусства - исторический и литературный.

Ключевые слова: поэзия, любовь, логика, настроение, точка зрения, познание, мировоззрение, философия.

ARMEN AVANESYAN - SHIFTS OF LOGIC AND MOOD: EDVARD MILITONYAN'S LOVE POETRY - Edward Militonyan's love poems are discussed according to collections. This enables us to recognize changes in the writer's perspective at different times.

In the recent poems, the image of love becomes comparative and relative, the poet becomes participant at the discretion, and a number of philosophical questions arise.

One of the striking features of Edward Militonyan's love poetry is the combination of epic and lyricism and its presentation in the context of modern Armenian reality. There are two worlds of art - historical and literary.

Keywords: poetry, love, logic, mood, point of view, cognition, worldview, philosophy.